



Երիտասարդության միջազգային օրվան նվիրված՝ օգոստոսի 12-ին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Օլեգ Դուլգարյանը մասնակցեց ՄԱԿ-ի Գլոբալ համագործակցություն հանուն երիտասարդության Հայաստանյան ցանցի ստեղծմանը :

Ցանցի ստեղծման գաղափարը առաջացավ, երբ «Սերունդ համահայկական երիտասարդական կենտրոնը» դիմեց ՄԱԿ-ի գլխամասային գրասենյակ, որպեսզի դառնա «Գլոբալ համագործակցություն հանուն երիտասարդության ցանցի» անդամ:

Հայաստանյան ցանցի հիմնադիր անդամ հանդիսացավ նաև « Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն, որը ընտրվեց նախաձեռնողների կողմից և ցանցում ստանձնեց «Մասնակցություն և կառավարում» ոլորտը, որտեղ առաջիկայում կբերի իր մասնակցությունը հաշվի առնելով կազմակերպության փորձը այս բնագավառում: